



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ա.Հ. Դազարյան

/Ա.Ա.Հ./

Արձանագրություն № __16__

« 08 » _05_ 2023_ թ.

ՔԿ/բ-148 «ԿՆՀ ՍՈՐՇՈՒՈՒԳԻԱ ԵՎ ԲՆԳ ՖԻԶԻՈՒՈՒԳԻԱ» ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝

031301.00.6 Հոգեբանություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

031301.01.6 Հոգեբանություն

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝

___ հոգեբանության բակալավր ___

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

քիմիայի և կենսաբանության

/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

հեռակա

/առկա, հեռակա/


Կուրս/կիսամյակ

հեռակա 1-ին կուրս, 2-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝

Մ.Պ. Կիրակոսյան

էլ. հասցե/ներ marykirakosian28@gmail.com



Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում	3
2.	Դասընթացի նպատակը և խնդիրները	4
3.	Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները	4
4.	Դասընթացի կրթական վերջնարդյունքները	4
5.	Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների	6
6.	Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը	6
7.	Ուսումնական աշխատանքները տեսակները	6
8.	Դասավանդման մեթոդներ.....	8
9.	Ուսումնառության մեթոդները	8
10.	Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը	9
11.	Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....	10
12.	Դասընթացի ուսումնամեթոդական քարտ.....	
12.1.	Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ	12
12.2.	Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.....	14
12.3.	Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.....	
12.4.	Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ	19
13.	Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.....	24
14.	Գնահատում.....	25
14.1.	Ուսանողների գիտելիքների ստուգում.....	25
14.2.	Հարցաշար.....	26
14.3.	Գնահատման չափանիշներ.....	27
15.	Դասընթացի համառոտ նկարագրիչ.....	29

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում¹.

«ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» առարկան կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական կրթամասի բաղադրիչներից մեկն է:

Մասնագիտական կրթական ծրագիրը սահմանում է յուրահատուկ իրազեկություններ առանձին առարկաների, ինչպես նաև «ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» առարկայի համար: «ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» առարկան ամբողջությամբ համապատասխանում է ԲՄԿ ՊԿԶ-ի պահանջներին:

«ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացը կարևորներից է ուսանողի կրթական հետաքրքրությունների շրջանակում ըստ ՄԿԾ-ի: Առարկայի ուսուցանումը կարևոր հիմք է ուսանողի անհատական հետաքրքրությունների համար մարդու ուղեղի կառուցվածքի և գործունեության մեխանիզմների իմացության տեսակետից: Առարկայի ուսուցանումը հնարավորություն է տալիս անհատական կրթական գործընթացում խորությամբ ճանաչել ուղեղի մոնիթորինգի և բարձրագույն ֆունկցիաները:

Այսօր շուկայական հարաբերությունների պայմաններում հոգեբան շրջանավարտից պահանջվում է հաշվի առնել շուկայական հարաբերությունները, որտեղ ամենակարևոր դերը տրվում է մասնագետի առարկայական գիտելիքներին: Այս առումով կարևոր է «ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացին նախորդող ուսումնական առարկաների իմացությունը: Այդ խնդրին մեծ տեղ է տրվում ԿԾ-ով:

Կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքի և բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմների խորը իմացությանը նպաստում է մարդու կազմաբանության, մարդու ֆիզիոլոգիայի, գենետիկայի իմացությունը: Ներկայումս հրատապ է հոգեֆիզիոլոգիական, նյարդահոգեկան, մանկավարժա-հոգեբանական խնդիրների իմացությունը և նրանց լուծման ուղիներ գտնելը, որին նպաստում են բարձրագույն նյարդային գործունեության (հոգեկան գործունեության) ֆիզիոլոգիական մեխանիզմների մասին հոգեբան-մասնագետի բազմակողմանի և համակարգված գիտելիքները:

«ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացը ընդգրկում է գլխուղեղի կառուցվածքի և գործունեության այնպիսի բարդ արտահայտությունների ֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրումը, ինչպիսիք են դրդապատճառները և հույզերը, հիշողությունը և մտածողությունը, քունը և երագատեսությունները, խոսքը և գիտակցությունը: Այն ներառում է նաև պայմանառեֆլեքսային գործունեության, ուսուցման, ամբողջական վարքագծային ակտերի կառուցվածքի և նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտումը:

«ԿՆՀ մոնիթորինգի և ԲՆԳ ֆիզիոլոգիա» առարկային ներկայացվող պահանջները բխում են առարկայի ծրագրից և ԿԾ պահանջներից:

Առարկան կարևոր նշանակություն ունի շրջանավարտների աշխատանքային պահանջների առումով, համաձայն ՄԿԾ-ի սահմանած իրազեկությունների: Առարկայի ծրագիրը այդ առումով պարունակում է խորացված հոգեբանական տեսակետներ, ի նկատի ունենալով ուսանողների մասնագիտական պահանջները:

¹ Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1 Դասընթացի նպատակն է նպաստել հոգեբան-մասնագետի կայացմանը՝ հոգեկան գործընթացների նյութական հենքը և ուսումնասիրման օբյեկտիվ մեթոդները յուրացնելով:

2.2 Դասընթացի խնդիրներն են.

- ուսանողներին զինել գիտելիքներով կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքի և նրա ֆունկցիաների, առավելապես բարձրագույն՝ հոգեկան գործունեության նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմների մասին,
- ծանոթացնել ժամանակակից բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի նվաճումներին և խնդիրներին,
- ընդհանուր պատկերացում տալ ուղեղի բարձրագույն ֆունկցիաների ախտաբանության և նրա կանխարգելման մեթոդների մասին:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.

«ԿՆՀ մորֆոլոգիա եվ ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացը յուրացնելու համար ուսանողներից պահանջվում են գիտելիքներ մարդու կազմաբանության, մարդու ֆիզիոլոգիայի, գենետիկայի վերաբերյալ:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը² և /կամ կոմպետենցիաները.

Պետք է գիտենա. /Տեսական գիտելիքներ/

- նյարդային համակարգի կառուցվածքը և գործառույթները
- կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ)կառուցվածքը
- մարդու վարքագծի ֆիզիոլոգիական հիմքերը,
- վարքագիծն ապահովող ուղեղային կառույցների գործունեության մեխանիզմները,
- դրդապատճառների և հույզերի դերը վարքագծի կազմակերպման մեջ,
- վարքագծի օրական ռիթմերի նշանակությունը և նրանց նյարդակենսաբանությունը,
- հիշողության, ուշադրության նյարդակենսաբանությունը,
- մարդու ԲՆԳ-ի մեխանիզմները և առանձնահատկությունները,
- բարձրագույն նյարդային գործունեության ախտաբանությունը:

.Պետք է կարողանա .

² <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

- յուրացնելով մարդու ԲՆԳ-ի մեխանիզմների վերաբերյալ տեսական նյութը, նպաստել մարդկանց հոգեկան առողջության ամրապնդմանն ու պահպանմանը,
- ԿՆՀ կառուցվածքից և ԲՆԳ-ից հանձնարարված թեմայի վերաբերյալ կատարել համապատասխան գրականության մշակում, կազմել ռեֆերատ, որոշ հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
- օգտագործել վարքագծի նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմների իմացությունը մասնագիտական գործունեությունը ճիշտ գիտական հիմքերով և արդյունավետ կազմակերպելու համար:

Պետք է տիրապետի

- որոշ չափով մարդկանց առողջական վիճակը գնահատելու, հոգեկան ֆունկցիաների որոշ ախտաբանական վիճակները հասկանալու ունակությանը,
- բարձրագույն նյարդային գործունեության վերլուծություն կատարելու մեթոդական հմտություններին,
- փորձարարական աշխատանքների կատարման մեթոդներին:

Դասընթացի ընթացքում կիրականանա նաև ծրագրի ավարտական պահանջներով նախատեսված հետևյալ կոմպետենցիաների զարգացումը`

Ընդհանրական կոմպետենցիաներ(Ը)

- Պատրաստել գեկուցումներ, ներկայացնել հետազոտության արդյունքները, վարել գիտական բանավեճեր (Գ1)
- Օգտվել տեղեկատվական աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը(Գ2)
- Ձգտել զարգացնելու ինտելեկտուալ, կոմունիկատիվ և կազմակերպչական հմտությունները(Գ2):

Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (այսուհետև` ԱԿ)

ա)բուն մասնագիտական կոմպետենցիաներ.

- Վերարտադրել հոգեբանության մեթոդաբանությունը(Ա -2),
- Նկարագրել հոգեկանի օրենքներն, օրինաչափությունները և մեխանիզմները(Ա -3),
- Թվարկել հոգեկան ակտիվության մակարդակները, գործընթացների, որակների, վիճակների, հատկությունների տիպաբանությունը և առանձնահատկությունները (Ա-4),
- Տարբերակել հոգեկանի և վարքի նորման, շեղումները և պաթոլոգիան(Ա -5):

բ)մասնագիտական-գործնական (այսուհետև` ՄԳԿ)

- Կիրառելու տեսական գիտելիքները և հետազոտական հմտությունները մասնագիտական գործունեության սահմաններում և առօրյայում(Բ2:)

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների³.

Դասընթացի ավարտին ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները կրթական ծրագրի շրջանավարտներին թույլ կտան աշխատել հանրակրթական դպրոցներում՝ որպես հոգեբան, մանկատներում, արտադասարանական ուսումնադաստիարակչական կենտրոններում՝ որպես հոգեբան, դաստիարակչական հաստատությունների հոգեբան, աշխատակից, ուստիկանության ուղղիչ դաստիարակչական հիմնարկներում՝ հոգեբան, ինամքի հաստատություններում, ներառական դպրոցներում՝ հոգեբան, շտկողական-գարգացնող հաստատությունների հոգեբան, աշխատակից, գիտահետազոտական և ուսումնական հաստատություններում՝ որպես լաբորանտ:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)		5 կրեդիտ/150 ժամ

Աշխատանքի տեսակը	Ժամաքանակ	Ժամաքանակ
Դասախոսություն		8
Գործնական աշխատանք		8
Սեմինար պարապմունք	-	-
Լաբորատոր աշխատանք		4
Ինքնուրույն աշխատանք		130
Ընդամենը		150
Ստուգման ձևը (ստուգաթիվ/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)		քննություն

7. Ուսումնական աշխատանքների տեսակները⁴ .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ

³ Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

⁴ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային զրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդաբանական:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են⁵

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:

8. Դասավանդման մեթոդներն են⁶ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. Ուսումնառության մեթոդներն են⁷ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում:

⁵ Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁶ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

⁷ Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների⁸.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		Դասախոսու թյուն	սեմինար պարապլունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	«ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացի ուսումնասիրման առարկան, խնդիրները, մեթոդները: Նյարդային հյուսվածքի կառուցվածքը, ֆունկցիաները: Նյարդային համակարգի ընդհանուր կառուցվածքը և գործառական առանձնահատկությունները: Նյարդային համակարգի ռեֆլեքսային գործունեությունը: Նյարդային համակարգի կենտրոնական և ծայրամասային բաժիններ, սոմատիկ և վեգետատիվ նյարդային համակարգ:	2		2	2	20
2.	Ողնուղեղի կառուցվածքը և գործառույթները: Գլխուղեղի ընդհանուր կառուցվածքը, զարգացումը: Երկարավուն ուղեղի, Վարոլյան կամուրջի, միջին ուղեղի ընդհանուր մորֆոլոգիան, անատոմիան, ֆիզիոլոգիան: Ուղեղիկի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունները: Միջանկյալ ուղեղի, առաջային ուղեղի ընդհանուր կառուցվածքագործառական առանձնահատկությունները: Ուղեղի լիմբիկական համակարգի կառուցվածքը և գործառական նշանակությունը:	2		2		30
3.	Պայմանական ռեֆլեքսների ֆիզիոլոգիական մեխանիզմները: Պայմանական ռեֆլեքսների արգելակման ֆիզիոլոգիական մեխանիզմները: Վարքագծային ակտի կառուցվածքը: Պ. Կ. Անտիսինի ուսմունքը գործառական համակարգերի մասին: Կենսաբանական դրդապատճառների (մոտիվացիաների) նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները: Հույզերի նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:	2			2	35
4.	Հիշողության նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները: Քնի նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները: Մարդու բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները: Հոգեկանի ֆիզիոլոգիական հիմքերը: Մեծ կիսագնդերի գործառական անգուգաչափություն: Մտածողություն, խոսք: Բարձրագույն նյարդային գործունեության ախտահարումները: Փորձնական ներդրումները որպես մարդու ներդրային վիճակների մոդել: Ներդրումների պատճառները, դրսևորումները:	2		2		45

⁸ Նման է օրացուցային պլանին

ԸՆԴԱՄԵՆԸ	8ժ.		8ժ.	4ժ.	130ժ.
----------	-----	--	-----	-----	-------

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

h/h	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Գևորգյան Ա.Շ., Կիրակոսյան Մ.Պ., Մարդու անատոմիա, Երևան, ՔոփիՓրինտ, 288էջ+160էջ նկ.	2017
2.	Բորջյակ Է. Ի., Դոբրովոլսկայա Ե. Ա., Ռևազով Վ. Ս., Սապին Մ. Ռ., Մարդու անատոմիա, Երևան, «Լույս», 334էջ	1992
3.	Լիսենկով Ն. Կ., Բուշկովիչ Վ. Ի., Պրիվես Մ. Գ., Մարդու նորմալ անատոմիայի դասագիրք, Երևան, «Լույս», 598էջ	1986
4.	Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ, Դ. Ն. Խուդավերդյանի, Վ. Բ. ֆանարջյանի խմբագր., Երևան, «Ռուբին» հրատարակ., 720էջ	1998
5.	Նորմալ ֆիզիոլոգիա, Դ. Ն. Խուդավերդյանի խմբագր., Եր.: ԵՊԲՀ, 726 էջ	2020
6.	Մինասյան Ս. Ս., Ադամյան Ծ. Ի., Սարգսյան Ն. Ծ., Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 609էջ	2007
7.	Խանբաբյան Ս. Վ., Նյարդային համակարգի և բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի հիմունքները., Երևան, էգես, -187էջ	2008
8.	Синельников Р. Д., Синельников Я. Р. Атлас анатомии человека, в 4-х томах, М., «Медицина»	1996
9.	Данилова Н.Н., Крылова А.Л. Физиология высшей нервной деятельности - Ростов н/Д: «Феникс»,— 478 с	2005
10.	Шульговский В.В. Нейрофизиология : учебник / В.В. Шульговский. — Москва : КНОРУС, 272 с.	2017
11.	Шульговский В. В. Физиология высшей нервной деятельности с основами нейробиологии.- М.:Издательский центр „Академия”, -464с.	2003

12.	Батуев А. С. Высшая нервная деятельность. Санкт-Петербург- Лань-. -408с	2002
13.	Коган А. Б. Основы физиологии высшей нервной деятельности. –М.: Высшая школа, 368с	1988
14.	Воронин А. Г. - Физиология высшей нервной деятельности. М.:-Высшая школа, 312с.	1979

Լրացուցիչ գրականություն(ԼԳ)

1.	Котляр Б. И. Нейробиологические основы обучения.- М., Наука.-238с	1989
2.	Основы психофизиологии: -Отв. ред. Ю.И. Александров.-М.:ИНФРА-М, -432с.	1998
3.	Физиология человека. Под ред. Косицкого П. И. М., Медицина.	1995
4.	Физиология человека. Под ред. Р. Шмидта, Г. Тевса, в 3-х томах.- М., «Мир»	2005
5.	Начала физиологии. Под ред. академика А. Д. Ноздрачева. Санкт-Петербург, «Лань»	2002
6.	Физиология человека. Учебник в 2-х т. Под ред. Покровского В. М., Коротько Г. Ф.-М., «Медицина»	2003

Մեթոդական ձեռնարկներ, երաշխավորագրեր

1.	Руководство к практическим занятиям по физиологии. Под. ред. Г. И. Косицкого. М., “Медицина”,	1998
2.	Մինասյան Ս.Ս., Հակոբյան Ն. Ս, Գրիգորյան Ս.Ս., Աղամյան Ծ. Բ.. Սարգսյան Ն.Ա., Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան	2003
3.	Կիրակոսյան Մ. Պ., Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, ուսումնամեթոդական ձեռնարկ լաբորատոր աշխատանքների համար, Վանաձոր, Արմինֆո	2006

Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)

1.		
----	--	--

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1.Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամաքանակ	Գրականություն ⁹
1.	<p>«ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացի ուսումնասիրման առարկան, խնդիրները, մեթոդները:</p> <p>Նյարդային հյուսվածքի կառուցվածքը, ֆունկցիաները: Նյարդային համակարգի ընդհանուր կառուցվածքը և գործառական առանձնահատկությունները:</p> <p>Նյարդային համակարգի ռեֆլեքսային գործունեությունը: Նյարդային համակարգի կենտրոնական և ծայրամասային բաժիններ, սոմատիկ և վեգետատիվ նյարդային համակարգ:</p>	<p>«ԿՆՀ մորֆոլոգիա և ԲՆԳ ֆիզիոլոգիա» դասընթացի ուսումնասիրման առարկան, խնդիրները, մեթոդները: Նյարդային հյուսվածքի կառուցվածքը, ֆունկցիաները: Հասկացություն դրդունակ հյուսվածքների մասին: Հանդստի պոտենցիալ, գործողության պոտենցիալ: Դրդելիություն, անդրդելիություն, լաբիլություն:</p> <p>Նեյրոնի կառուցվածքը, դասակարգումը: Սինապսների կառուցվածքը, միջնեյրոնային կապի մեխանիզմը: Դրդման հաղորդումը նյարդաթելով:</p> <p>Ռեֆլեքսային աղեղի կառուցվածքը: Մոմատիկ և վեգետատիվ ռեֆլեքսային աղեղ: Ծայրամասային նյարդային համակարգի կառուցվածքը: Ողնուղեղային նյարդեր, գանգուղեղային նյարդեր: Վեգետատիվ նյարդային համակարգի ընդհանուր կառուցվածքը և գործառույթները: Սիմպաթիկ նյարդային համակարգի կառուցվածքը և ֆունկցիաները:</p> <p>Պարասիմպաթիկ, մետասիմպաթիկ նյարդային համակարգի կառուցվածքը և ֆունկցիաները:</p>	2	ՊԳ-7,9,11,12,13,10,5,6,1 ԼԳ-5,4,3,6

⁹ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, որ.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2.	<p>Ողնուղեղի կառուցվածքը և գործառույթները: Գլխուղեղի կառուցվածքը և ֆունկցիաները:</p>	<p>Ողնուղեղի մորֆոլոգիա: Ողնուղեղի գորշ նյութի կառուցվածքը: Ողնուղեղի սպիտակ նյութը: Ողնուղեղի ռեֆլեքսային և հաղորդչական ֆունկցիան: Գլխուղեղի ընդհանուր նկարագիրը: Սաղմնային և տարիքային առանձնահատկությունները:</p> <p>Երկարավուն ուղեղի, Վարոլյան կամուրջի ընդհանուր մորֆոլոգիան, սպիտակ և գորշ նյութի տեղադրությունը: Ուղեղաբնի ցանցանման գոյացություն, նրա կառուցվածքային կազմավորումը: Ուղեղիկի ընդհանուր մորֆոլոգիան, ուղեղիկի կորիզները: Միջին ուղեղ, ընդհանուր մորֆոլոգիան, հիմքի և տանիքի կառույցները:</p> <p>Տեսաթմբի վերտեսաթմբի, հետտեսաթմբի և ենթատեսաթմբի նեյրոնային կազմավորումը, ֆունկցիան: Հիմային հանգույցների կառուցվածքը, նշանակությունը: Մեծ կիսագնդերի կեղևի ընդհանուր մորֆոլոգիան, նրանց բլթերը, ակոսները, գալարները: Մեծ կիսագնդերի կեղևի գործառական նշանակությունը: Ուղեղի լիմբիկական համակարգի կառուցվածքը և ֆունկցիաները:</p>	2	ՊԳ-1,2, 3, 7 , 8, 9 ,11, 12, 13, 10 ,5, 6, ԼԳ-5 ,4 ,3 ,6
3.	<p>Պայմանական ռեֆլեքսների ֆիզիոլոգիական մեխանիզմները:</p> <p>Պայմանական ռեֆլեքսների արգելակման ֆիզիոլոգիական մեխանիզմները:</p> <p>Վարքագծային ակտի կառուցվածքը:</p> <p>Պ. Կ. Անոխինի ուսմունքը գործառական համակարգերի մասին:</p> <p>Կենսաբանական դրդապատճառների (մոտիվացիաների) նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:</p> <p>Հույզերի նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:</p>	<p>Պայմանական ռեֆլեքսների ընդհանուր հատկանիշները, նրանց դասակարգումը: Ժամանակավոր կապերի մշակման կառուցվածքային հիմքերը: Պայմանական ռեֆլեքսների առաջացման մեխանիզմները: Կողմնորոշման ռեֆլեքս, նրա դերը ԲՆԳ գործընթացներում:</p> <p>Պայմանական ռեֆլեքսների ոչ պայմանական արգելակում, պայմանական ռեֆլեքսների պայմանական արգելակում: Պայմանական ռեֆլեքսների արգելակման տարբեր ձևերի փոխազդեցությունը:</p> <p>Հասկացություն գործառական համակարգի մասին:</p> <p>Վարքագծի գործառական համակարգի սխեման ըստ Պ.Կ. Անոխինի: Աֆերենտ սինթեզ, նրա բովանդակությունը:</p> <p>Գործողության արդյունքների ակցեպտոր, էֆերենտ սինթեզ: Հույզերի դերը վարքագծում: Հասկացություն պահանջների և դրդապատճառների մասին, նրանց դերը վարքագծում:</p>	2	ՊԳ-7 ,9 ,11, 12, 13 ,10 ,5, 6, 14 ԼԳ-5 ,4 ,3 ,6

		<p>Դրդապատճառների ուսումնասիրման մոթոդները, նրանց ընդհանուր հատկությունները: Դրդապատճառների նյարդաանատոմիա, նյարդադիֆուզիա, նյարդաքիմիա: Հույզերի ընդհանուր բնութագիրը, դերը վարքագծում: Հույզերի տեսությունները: Հույզերի դասակարգումը և ֆունկցիաները: Գլխուղեղի հուզածին կառույցները: Հույզերի նյարդաքիմիան, ֆիզիոլոգիական մեխանիզմները:</p>		
4.	<p>Հիշողության նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները: Քնի նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները: Մարդու բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները: Բարձրագույն նյարդային գործունեության ախտահարումներ:</p>	<p>Հիշողության ֆիզիոլոգիական մեխանիզմները: Կարճատև հիշողության մեխանիզմները: Տարբեր ուղեղային կառույցների դերը երկարատև հիշողության մեխանիզմներում: Երկարատև հիշողության նյարդաֆիզիոլոգիան, նյարդաքիմիան: Հիշողության խանգարումներ: Գլխուղեղի գործառական վիճակները: Քունը որպես միջավայրի պայմաններին հարմարվելու հարմարանք: ՔՔնի կառուցվածքը, նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները, ֆիզիոլոգիական նշանակությունը: Երազատեսության մասին ժամանակակից պատկերացումները: Հիպնոս: Մարդու բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները, մարդու ԲՆԳ-ի տիպերը: Հոգեկանի ֆիզիոլոգիական հիմքերը: Մեծ կիսագնդերի գործառական անգուգաչափություն: Մտածողություն, գիտակցություն, խոսք: Ուղեղի ճակատային բլթերի դերը ծրագրավորման, որոշման ընդունման մեխանիզմներում: Փորձնական ներդրումները որպես մարդու ներդրային վիճակների մոդել: Ներդրումների պատճառները, դրսևորումները:</p>	2	ՊԳ-7 ,9 ,11, 12, 13 ,10 ,5, 6, ԼԳ-5 ,4 ,3 ,6, 2, 1

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնասիրողական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամ արանակ	Ստուգման ձևը	Գրականություն ¹⁰
1.	Մարդու մորֆոլոգիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրման մեթոդները: Նյարդային համակարգի կառուցվածքը, ֆունկցիաները:	1. Աղյուսակով ներկայացնել մորֆոլոգո-անատոմիական և ֆիզիոլոգիական մեթոդները, նրանց կիրառման բնագավառը: 2. Ներկայացնել նյարդային հյուսվածքի կառուցվածքը: 3. Պատկերել նեյրոնի կառուցվածքի գծապատկերը: 4. Պատկերել նյարդագլխայի կառուցվածքը: 5. Լրացնել աղյուսակ «Տարբեր տիպի նեյրոնների կառուցվածքը, տեղադրությունը, ֆունկցիան»: 6. Գծապատկերի օգնությամբ ներկայացնել սինապսի կառուցվածքը: 7. Մխեմատիկորեն պատկերել նյարդաթելի, նյարդի կառուցվածքը: 8. Մխեմատիկորեն պատկերել նյարդաթելով ազդակի հաղորդման մեխանիզմը: 9. Ներկայացնել հանգստի պոտենցիալի առաջացման մեխանիզմը գծապատկերի օգնությամբ: 10. Ներկայացնել ԳՊ-ի, դրդման ժամանակ դրդելիության փոփոխության կորերը:	2	բանավոր	ՊԳ-7 ,9 ,11, 12, 13 ,10 ,5, 6,1 ԼԳ-5 ,4 ,3 ,6

¹⁰ Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2.	<p>Նյարդային համակարգի կենտրոնական և ծայրամասային բաժիններ, սոմատիկ և վեգետատիվ նյարդային համակարգ: Կենտրոնական նյարդային համակարգի կառուցվածքագործառական առանձնահատկությունները:</p>	<p>1.Ներկայացնել սխեմատիկորեն նյարդային համակարգի կենտրոնական և ծայրամասային բաժինները: 2.Ներկայացնել աղյուսակով սոմատիկ և վեգետատիվ նյարդային համակարգի կառուցվածքը, ֆունկցիաները, համեմատական վերլուծությունը: 3.Աղյուսակով ներկայացնել սիմպաթիկ և պարասիմպաթիկ նյարդային համակարգի կառուցվածքը, ֆունկցիաները: Կատարել վեգետատիվ նյարդային համակարգի բաժինների համեմատական վերլուծություն: 4.Նկարել և բացատրել սոմատիկ և վեգետատիվ ռեֆլեքսային աղեղի գծապատկերը: 5.Սխեմատիկորեն պատկերել ողնուղեղի լայնական կտրվածքը, նշել կառուցվածքային տարրերը, բացատրել ֆունկցիաները: 6.Աղյուսակով ներկայացնել հաղորդչական ուղիները և նրանցով ազդակահոսքի բնույթը: 7.Սխեմատիկորեն պատկերել երկարավուն ուղեղի. Վարոյան կամուրջի լայնական կտրվածքը, նշել կառուցվածքային տարրերը, բացատրել ֆունկցիաները: 8.Սխեմատիկորեն պատկերել ուղեղիկի կտրվածքը, նշել կառուցվածքային տարրերը, բացատրել ֆունկցիաները: 9.Սխեմատիկորեն պատկերել տեսաթմբի, ենթատեսաթմբի կտրվածքը, նշել կառուցվածքային տարրերը, բացատրել ֆունկցիաները: 10.Սխեմատիկորեն պատկերել մեծ կիսագնդերի կտրվածքը, նշել կառուցվածքային տարրերը, բացատրել ֆունկցիաները: 11.Սխեմատիկորեն պատկերել մեծ կիսագնդերի մեջբակողմնային մակերեսը, նշել հիմնական ակոսները, գալարները, բացատրել ֆունկցիաները:</p>	2	բանավոր	ՊԳ-1,2, 3, 7, 8, 9,11, 12, 13, 10, 5, 6, ԼԳ-5 ,4 ,3 ,6
----	---	--	---	---------	--

3.	Հիշողության նյարդաֆիզիոլոգիան: Քնի նյարդակենսաբանությունը:	<p>1. Մխեմատիկորեն ներկայացնել հիշողության կառուցվածքը, բացատրել դերը վարքագծում: Պատկերել փակ նեյրոնային շղթայով դրդման ռեվերբերացիայի սխեման, ներկայացնել կարճատև հիշողության ֆիզիոլոգիական մեխանիզմները: Բացատրել գծապատկերի օգնությամբ հիշահետքերի ամրապնդման մեխանիզմները:</p> <p>2. Ներկայացնել օգտվելով գծապատկերից ժամանակակից պատկերացումները երկարատև հիշողության մեխանիզմների վերաբերյալ:</p> <p>3. Աղյուսակով ներկայացնել հիշողության գործընթացների խանգարումները և նրանց բովանդակությունը:</p> <p>4. Մխեմատիկորեն պատկերել և բացատրել քնի հիմնական ֆունկցիաները:</p> <p>5. Գծապատկերել և ներկայացնել քնի տեսակները:</p> <p>6. Աղյուսակով ներկայացնել քնի կառուցվածքը և ֆիզիոլոգիական բնութագիրը:</p> <p>7. Աղյուսակով ներկայացնել հիշողության գործընթացների խանգարումները և նրանց բովանդակությունը:</p> <p>8. Ներկայացնել ժամանակակից պատկերացումները երազատեսությունների վերաբերյալ:</p>	2	բանավոր	ՊԳ-7 ,9 ,11, 12, 13, 10 ,5, 6, ԼԳ-5 ,4 ,3 ,6
4.	Բարձրագույն նյարդային գործունեության առանձնահատկությունները: ԲՆԳ-ի ախտաբանություն:	<p>1. Մխեմատիկորեն ներկայացնել և բացատրել մարդու բարձրագույն նյարդային գործունեության որակական տարբերությունը բարձրակարգ կենդանիների ԲՆԳ-ից:</p> <p>2. Աղյուսակով ներկայացնել առաջին և երկրորդ ազդանշանային ռեֆլեքսների նմանությունը և տարբերությունները:</p> <p>3. Աղյուսակով ներկայացնել ԲՆԳ-ի հիմնական տիպերը և նրանց հոգեֆիզիոլոգիական բնութագիրը:</p> <p>4. Մխեմատիկորեն պատկերել խոսքի կենտրոնները և բացատրել նրանց ֆունկցիաները:</p> <p>5. Աղյուսակով ներկայացնել հոգեախտերը, նրանց հիմնական տեսակները, առաջացման պատճառները:</p> <p>6. Աղյուսակով ներկայացնել փորձնական ներդրումների առաջացման պատճառները և բացատրել նրանց նյարդաֆիզիոլոգիական մեխանիզմները:</p>	2	բանավոր	ՊԳ-7 ,9 ,11, 12, 13, 10 ,5, 6, ԼԳ-5 ,4 ,3 ,6, 2

12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Թեմա	Ուսումնասիրվող հարցեր	Ժամ արան ակ	Ստուգման ձևը	Գրականություն ¹¹
